ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ 23/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ՀՄԱԱՇՁԲ-22/04»

ք.Երևան «04» 08 2022 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱՌ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Գ. Նժդեհի 23/1 հասցեում գտնվող վարչական վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են 20.06.2022թ.-ից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 70 օրացուցային օր**:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և [illegible] սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում 47 706 192 (քառասունյոթ միլիոն յոթ հարյուր վեց հազար մեկ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, որից 7 951 032 (յոթ միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար երեսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը 20.06.2022թ-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Կապալառու կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ

ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում (ՀՀ կառավարության 17.06.2022թ. թիվ 913-Ն որոշում):

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***«ԱԳԱԹ-777» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01807983
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Ա. Հարությունյան	Տնօրեն՝ Դ. Եսայան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 04 » 08 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱԱՇՁԲ-22/04 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-Նախահաշիվ

ՀՀ դրամ

հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավոր.	Քանակ	Միավորի գին	Ընդամենը
1	2	3	4	5	6
1	Քարե պարիսպի քնդում դռան բացվածքների համար	խմ	0.9	30000	27000
3	Միաձույլ ե/բետոնյա շրջանակի սյուներ B20 դասի բետոնից	խմ	0.3	125000	37500
4	Ամրան Ա -500c	տն	0.020	650000	13000
5	Ե/Բ բարավորների իրականացում B-20 դասի բետոնով	խմ	0.17	125000	21250
6	Ամրան Ա -500c	տն	0.015	650000	9750
7	Տարածքի մաքրում շին աղբից, թփերի հեռացում բարձում և տեղափոխում մինչև 13 կմ	տն	14.000	3850	53900
8	III -րդ կարգի գրունտի մշակում ձեռքով կետային հիմքերի տակ	խմ	11.200	3500	39200
9	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 13կմ	տն	22.400	3850	86240
10	Խճի նախաշերտ կետային հիմքերի տակ	խմ	1.100	15600	17160
11	կետային հիմքերի կառուցում պարիսպների համար B 15 դասի բետոնից	խմ	9.36	72000	673920
12	Ցանկապատի մետաղական կանգնակների և գոտիների մոնտաժ խողովակներից	տն	0.951	285000	271035
13	խողովակ 100*100*3.5 մմ	մ	8	12560	100480
14	խողովակ 80*60*2.5 մմ	մ	96	7350	705600
15	խողովակ 40*25*2 մմ	մ	144	2100	302400
16	Ամրան Ա -500c	տն	0.100	672000	67200
17	Կանգնակների գլխանոցների իրականացում պողպատե թերթով	հատ	26.000	4750	123500
18	Ցանկապատի մետաղական տարերի ներկում հակակորոզիոն ներկով երկշերտ	մ2	48.800	2850	139080
19	Ցանկապատի կառուցում պրոֆնաստիլով B 0.5 մմ գործարանային ներկվածությամբ	մ2	144.000	12900	1857600

20	4-րդ կարգի գրունտի փորում փոսորակներում ձեռքով	խմ	4	4750	19000
21	Գրունտի ետլիցք ձերքով և տոփանում	խմ	2	2500	5000
22	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 13կմ	տն	4	3850	15400
23	B 7,5 դասի բետոնից նախաշերտ հիմքերի տակ	խմ	0.10	45000	4500
24	Միաձույլ ե/բետոնե փոսերի պատեր B 15 դասի բետոնից 10սմ հաստությամբ	խմ	0.4	72000	28800
25	Ամրան Ա -500c Φ=10մմ	տն	0.047	672000	31584
26	Մետաղական արտաքին բազրիքներ տարբեր պրոֆիլներից	մ	43	24500	1053500
27	Առաջին և նկուղային հարկերի պատուհանների ճաղավանդակների տեղադրում	մ2	65	28000	1820000
28	Մետաղական դռնակի տեղադրում	հատ	1	142000	142000
29	Մետաղական հեռակառավարվող դարպասի տեղադրում	հատ	1	950000	950000
30	Դռան բռնակ փական	հատ	1	12000	12000
31	կախովի կողպեք դարպասի և դռնակի համար	հատ	2	4500	9000
32	Ծխնի	հատ	8	5800	46400
33	Մետաղական տարերի ներկում հակակորոզիոն ներկով երկշերտ	մ2	134.6	2500	336500
34	խճի նախաշերտ ասֆալտեբետոնյա ծածկի տակ 10սմ ճանապարհների համար	100/ մ2	3.900	150000	585000
35	Խճի շերտի տոգորում բիտումային էմուլսիայով 0,206տն 100քմ համար	տն	0.8	375000	300000
36	ճանապարհների ծածկի առաջին շերտ 4,0սմ հաստությամբ խոշորահատիկ ասֆալտաբետոնից	100/ մ2	3.900	500000	1950000
37	Վերին շերտի ծածկը 3,0սմ հաստությամբ մանրահատիկ ասֆալտաբետոնից	100/ մ2	3.900	420000	1638000
38	Ջրաչափական հորի ե/բետոնյա սալի կառուցում B20 մկնիշի բետոնից	խմ	1.2	108000	129600
39	Ամրան Ա -500c	տն	0.090	672000	60480
40	Մետաղական դռնակի տեղադրում 0.7*0.7մ չափերի	հատ	1	25000	25000
41	Անցակետի մետաղապլաստե միջնորմների կառուցում ապակեպատ չբացվող	մ2	14	34000	476000
42	Անցակետի մետաղապլաստե դռան տեղադրում ապակեպատ	մ2	2	48000	96000
43	Նիստերի դահլիճի բարձրահարթակ բարձրահարթակի փայտյա կարկասի կառուցում չորսուներից	խմ	3.2	275000	880000

44	Հատակի OSB սալերի տեղադրում	քմ	64	7800	499200
45	Հատակի ծածկ լամինատից շրիշակների հետ միասին սպունգով 8մմ հաստությամբ	քմ	64	11900	761600
46	ՄԴՖ-ից լամինացված պանելների տեղադրում	քմ	64	27000	1728000
47	Փայտե կարկասի մշակում հակահրդեհային լուծույթով	խմ	3.20	15000	48000
48	Արտաքին պատերի մակերևույթների մաքրում ավազաշթով	քմ	260.00	1350	351000
49	Գույքային տախտակամածի պատրաստում և քանդում	քմ	160.00	1200	192000
50	**Ջեռուցման համակարգ**				0
51	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500մմ /623x0,28=174,44էկմ.	էկմ	97	3000	291000
52	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սեկց.	344	7500	2580000
53	Φ63x9,2մմ պոլիպրոպելենային խողովակաշարի մոնտաժում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	մ	5	6000	30000
54	Φ50x8,4մմ պոլիպրոպելենային խողովակաշարի մոնտաժում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	մ	35	7600	266000
55	Φ40x6,7մմ պոլիպրոպելենային խողովակաշարի մոնտաժում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	մ	130	5500	715000
56	Φ32x5,4մմ պոլիպրոպելենային խողովակաշարի մոնտաժում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	մ	50	4500	225000
57	Φ25x4,2մմ պոլիպրոպելենային խողովակաշարի մոնտաժում/լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	մ	90	4100	369000
58	Φ20x3,4մմ պոլիպրոպելենային խողովակաշարի մոնտաժում/լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	մ	110	3900	429000
59	Մարտկոցների միացման կոմպլեկտ	հատ	50	2500	125000
60	Մարտկոցի թերմոստատ փական վերևի անկյունային Φ20մմ	հատ	50	4700	235000
61	Մարտկոցի փական ներքևի անկյունային Φ20մմ	հատ	50	4700	235000
62	Օդահեռացման փական Φ15մմ	հատ	50	4200	210000
63	Φ-50մմ պողպատե սողնակի տեղադրում	հատ	2	28000	56000
64	Φ-40մմ պողպատյա փականի տեղադրում	հատ	4	8500	34000
65	Φ-25մմ պողպատյա փականի տեղադրում	հատ	2	5000	10000
66	Φ-20մմ պողպատյա փականի տեղադրում	հատ	2	4000	8000
67	Φ-15մմ պողպատյա փականի տեղադրում	հատ	2	3500	7000
68	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր	հատ	360	1400	504000

69	Պոլիպրոպիլենային խողովակների ամրացում	հատ	560	500	280000
70	Մարտկոցների ամրացում	հատ	130	1500	195000
71	Անցքերի բացում պատերում	մ3	0.16	45000	7200
72	Պողպատյա պատյանի տեղադրում ծածկում	գծմ	2.4	4000	9600
73	Անցքերի վերականգնում	հատ	8	2500	20000
74	Մանոմետրի տեղադրում	հատ	1	11006	11006
75	Ջերմաչափի տեղադրում	հատ	1	13000	13000
76	Կոնդենսացիոն երկկոնտուրանի տուրբո կաթսայի տեղադրում 32կվտ	հատ	1	1600000	1600000
77	Ընդարձակման բաք V=50լ varem 50լ d=320մմ, h=580մմ պատին ամրացումով /համարժեք/	հատ	1	185000	185000
78	Ցանցային ջրի շրջանառու պոմպի տեղադրում Q=5մ3/ժամ, H=10մ,N=0,76կվտ	հատ	1	285000	285000
79	Համալրման պոմպի տեղադրում Q=1,5մ3/ժամ, H=10մ,N=1կվտ	հատ	1	132000	132000
80	Φ70մմ հետադարձ փականի տեղադրում	հատ	1	38000	38000
81	Φ25մմ հետադարձ փականի տեղադրում	հատ	1	5000	5000
82	**Տեսահսկման համակարգ**				0
83	Պլաստմասե ճկախողովակների տեղադրում պատերի վրա Φ-20 մմ	100մ	6.3	30000	189000
84	Ցանցային մալուխ F/UTP Cat5e	100մ	30.50	69000	2104500
85	Սակառ /կոռոբ/	մ	500	3100	1550000
86	Համակարգչային վարդակ	հատ	50	4500	225000
87	Հեռախոսային վարդակ	հատ	55	4500	247500
88	Ցանցային բաժանարար 24 պորտ /Svitch/	հատ	4	98000	392000
89	Տեսագրող սարք DVR 10p	հատ	1	298000	298000
90	Կոշտ սկավառակ HDD 2TB	հատ	1	260000	260000
91	Տեսախցիկ ներքին տեղադրմամբ 5Mp 20w IR	հատ	8	62000	496000
92	Տեսախցիկ դրսի տեղադրմամբ 5Mp 20w IR	հատ	8	85000	680000
93	Մարտկոց 12Վ ,30Ա,	հատ	1	32000	32000
94	BNC, power Toch 14h/14h	հատ	28	11000	308000
95	Ցանցային մալուխ LC TV 4+1	100մ	5.00	72000	360000
96	Մոնիտոր-32	հատ	1	85000	85000
97	Մոնտաժ.տուփ 100*100 մմ	հատ	21	3000	63000
98	Անցքերի շաղափում 20մմ հաստ.միջնորմերում	հատ	20	2000	40000
99	Անցքերի շաղափում 40մմ հաստ.արտաքին պատերում	հատ	6	4000	24000
100	Անցքերի շաղափում 30մմ հաստ. միջհարկային ծածկերում	հատ	5	3500	17500
101	Ծրագրային ապահովում իր մեջ ներառված,համակարգի կարգաբերում,ծրագրավորում	կետ	22	3800	83600
102	UPS անխափան սնուցման սարք	կ-տ	1	30000	30000

103	Պահունակ	հատ	21	5000	105000
104	Պլաստմասե ճկախողովակների տեղադրում պատերի վրա Φ-20 մմ	100մ	5.0	30000	150000
105	Պտուտակաձողի տեղադրում ամբողջական լրակազմով	լրակազմ	1	982800	982800
106	Արգելապատնեշի պատրաստում և տեղադրում մետաղական երկշերտ յուղաներկումով h= 80սմ	մ2	4.8	34000	163200
107	Հաղորդալարեր	մ	150	1200	180000
108	Դռան քարտային ռեժիմով ստեղնաշար	հատ	2	97000	194000
109	**Արտաքին լուսավորություն**				0
110	Խրամուղու փորում 0.25մ3 շերեփի տարողության էքսկավատորով, կողլիցք	խմ	22.5	2500	56250
111	Նույնը, բարձելով ինքնաթափի վրա	խմ	13.5	1500	20250
112	Փոսի փորում 0,5x0,5x1,0(h)	խմ	4.5	4750	21375
113	Գրունտի ետլիցք բուլդոզերով	խմ	27	1500	40500
114	Գրունտի տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	27	800	21600
115	Ավելորդ գրունտի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	խմ	14.0	1000	14000
116	Հենասյուն պողպատե խողովակից Φ159մմ h=8մ 1 բարձակով	հատ	6	90000	540000
117	Բարձակ	հատ	6	8000	48000
118	Լուսատու արտաքին լուսավորման, LED լուսադիոդային100վտ հզորության IP65	հատ	6	98000	588000
119	Ավտոմատ անջատիչ 1 բևեռանի 6Ա	հատ	6	5000	30000
120	Տուփ բաժանարար, սեղմաշարով, տեղադրվող հենասյան մեջ	հատ	6	11000	66000
121	Հաղորդալար պղնձից 3x2,5մմ ՊՊԲ-380	մ	90	1100	99000
122	խողովակ Φ50մմ մալուխը հենարանի մեջ անցկացնելու համար	մ	18	4500	81000

123	Մալուխ ուժային, ալյումինե АВВГ-1,0 4х16մմ2 կտր.	մ	180	1980	356400
124	Անկողնակի պատրաստում խրամուղում ավազից	մ	180	500	90000
125	Ավազ	խմ	9	8000	72000
126	Ազդանշանային ժապավեն 300մմ լայնութ.	մ	180	100	18000
127	100մմ տրամ. վինիպլաստե կոշտ խողովակ	մ	180	1500	270000
128	Հենարանների բետոնացում В-15 դասի բետոնով	խմ	4.5	35000	157500
129	Մետաղական հենասյուների յուղաներկում	քմ	31.0	1000	31000
130	Վահանակ լուսավորության, մետաղական, 12 մոդուլի համար	հատ	1	20000	20000
131	Ավտոմատ-անջատիչ եռաբևեռ 32Ա	հատ	1	2000	2000
132	Ավտոմատ-անջատիչ միաբևեռ 25Ա	հատ	3	1000	3000
	Ընդամենը				**39755160**
	ԱԱՀ 20%				7951032
	Ամբողջը				**47 706 192**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«04» 08 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱԱՇՁԲ-22/04 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ 23/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Գ. Նժդեհի 23/1 հասցեում գտնվող վարչական վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	20.06.2022թ	70 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		20.06.2022թ	70 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«04» 08 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱՇՁԲ-22/04 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/20	Երևան քաղաքի Գ. Նժդեհի 23/1 հասցեում գտնվող վարչական վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	47 706 192	47 706 192	47 706 192	47 706 192	47 706 192	**47 706 192**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Հ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱՍՇՁԲ-22/04 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱՇՁԲ-22/04 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն